

ՏԱՍԵՆԵՐՈՐԻՒՄ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րոպե, կես տարվան 6 րոպե:
Առանձին նամակները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրված են միայնակ նամակներում մեջ:
Պարտադրարարողը պիտի լինի Երևանի:
Տպագրությունը՝ Պետրոսյան «Մատուց»:

Երկրորդ տարեկան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարումը ընդունվում է ամեն կեղևով:
Յայտարարումը ընդունվում է ամեն կեղևով:
Երկրորդ տարեկան 10—2 ժամ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Գարձեալ մի տարագրություն:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բագուցից: Նամակ Մեծ-Ղարաբլիցից: Նամակ Օղեսայից: Նամակ Աղնախից: Ներքին լուրեր:—ԱՐՄԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Սերբիա: Ֆրանսիա: Անգլիա: Գերմանիա: Թուրքիա: Նամակ Գերմանիայից: Արտաքին լուրեր:—ՀԱՌՈՒՊԻՆԵՐ:—ՅԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԳԱՐՁԵԱԼ ՄԻ ՏԱՌԱՊԱՆՔ

Անգլիական լրագրողները հաղորդում են որ թիբեթացի Հայաստանը գարձեալ մի սարսափելի տուտագանքին ենթարկվեցաւ: Ատեր կողմերի 34 զիւղեր քանդված են երկրաշարժով:

Կարծես ոչ թէ միայն մարդիկ ընդդէմ են Հայաստանին, բայց նոյն իսկ բնութիւնը թշնամի է այդ երկրին և նրա բնակիչներին:

Հրդեհ, սով, հիւանդութիւններ, վերջապէս երկրաշարժ, — ամեն բանին հետզհետեւ ենթարկվում է Հայաստանը:

Անգլիական հիւպատոսը արդէն ուղևորվել է այն տեղեր, որտեղ պատահել է երկրաշարժը, որպէս զի օգնութիւն հասցնի վնասվածներին և կարօտներին:

Երբ որ նորերումս թիւս կղզու վրա երկրաշարժ պատահեց, աշխարհիս ամեն կողմերից օգնութիւն հասաւ կղզու վնասված բնակիչներին:

Հարկաւոր է միթէ ասել, որ իւրաքանչիւր հայի պարտաւարութիւնն է այժմ օգնել Վանի նահանգի զիւղերի երկրաշարժից վնասվածներին:

Հաւատացած ենք որ այդ դժբաղդ անցքը նոյնքան արձագանք կը գտնի իւրաքանչիւր հայի սրտում, որքան արձագանք էր գտնում Հայաստանի սոյն մի երկու տարի սրանից առաջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՈՎՈՒՅ

30 հոկտեմբեր 6-ին

Անցեալ նամակովս ձեռք հաղորդած լուրը, թէ ուսաց Հոգեգալուստի տոններին այստեղի ուսուարնետաւորները մտադիր են յարձակվել հրէաների վրա և նրանց ջարդել, — բարեբաղդաբար չը հաստատվեց: Բայց և այնպէս տեղական ազմիրստարացիան իր բոլոր պատրաստութիւնները վաղօրօք տեսել էր խառնակութիւնների առաջն առնելու համար: Երկու օր շարունակ գիտնելու ձառնարկն արդեւ ձեռք էր բերել իրանց կրօնականները, որպէս զի ալիօժուր, մարդկութեան այդ զվաւոր անբաղդութիւններից մէկը, իր սարսափելի գործիքներով չը գրգռէ մի քանի տաք գլուխների գազանական կրքերը: Հրէաները նոյնպէս երկու օր շարունակ իրանց խառնութիւնները չը բաց արին, մի քանիսը նրանցից մինչև անգամ թանգաղին երեղենները խառնութիւններից տեղափոխել էին իրանց տները: У страха глаза велики, ասում է ուսաց առածը. ես երբէք չեմ մտածայ մի գեղեցիկ կսթերի դառն արտասուքը, որ նա թափում էր սարսափելի երկիւղից: Սակայն, ինչ է իցէ, շատ ուրախակ է որ ամենայն ինչ այժմ հանգիստ է: Կարծում են թէ երբէք ուսմիկները չեն էլ մտածել յար-

ձակվել հրէաների վրա և այդ լուրը, իբր թէ, տարածել են մի քանի չարամիտներ հասարակութիւնը դրդելու համար, որպէս զի իրանք պղծատար ջրի մէջ ձուկ որսան: Թէ որքան ճշմարիտ է այդ կարծիքը, չը գիտեմ, միայն ես մը օր առաջ այն օրից, երբ սպասվում էր հրէաների ջարդը, պատահմամբ լսեցի մի խումբ արհեստարարների տաք խօսակցութիւնը, որոնցից մի քանիսը այնքան գրգռված էին, որ կրկնում էին անուշաժ քաշել հրէաներին ականջներից, ինչպէս արտասանում էին իրանք, բայց միւսները աշխատում էին համոզել այդ տաք գլուխներին, թէ կովկասում առհասարակ չարժէ անհանդուտացնել հրէաներին, որովհետև նրանց թիւը առաջին շատ քիչ է այստեղ և երկրորդ որ նրանց չէ կարելի համեմատել Ռուսաստանի հարաւային կողմերի հրէաների հետ հարտանաբութեան կողմից: Շատ ուրախակ է, որ գուհիկ ամբողջ մէջ գտնվում են լրջամիտներ, որոնք իրանց խոսեմ համոզմունքով կարողանում են զսպել վարդենի կրքերը: Ո՛վ գիտէ եթէ այդպիսիները չը լինէին, զուցէ հրէաների ջարդը անփախչելի լինէր:

Վաղ երկրայեան քաղաքային այգում Բագուի «Վարդապետական ընկերութեան» աշխատանքով կը լինի հասարակական գրօսանք յոգաւ այս տարվայ Բագուի Վեպական ուսումնարանում աւարտող չքաւոր հայ ուսանողների, որոնք փախազում են դիմել բարձր կրթութեան, բայց չունեն նիւթական միջոց: Այս բարի գործի ինիցիատիվը պատկանում է տէր Թադէոս Բուզադեանին: Մեզ համար մեծ յանգանք կը լինէր չը յայտնել տէր Տորը մեր խորին շնորհակալութիւնը, որը յայտնի է Բագուի հասարակութեան մէջ ինչպէս նախկինում մի անձնատրութիւն: Արդարութեամբ պահանջում է խոստովանել, որ Բ. Բուզադեանի նման հոգեւորականների թիւը շատ փոքր է հայերի մէջ: Կոչուպէս այս անգամ շնորհակալութեան արժանի է «Վարդապետական ընկերութեան» խորհուրդը, ինչպէս նաև Բագուի քաղաքագլուխ Կեպուս-Չինովիչ, որը նոյնպէս արժանութեամբ առաջարկել էր իր օգնութիւնը: Վաղը այս հանդէսի մասին ես կը գրեմ ձեռք, եթէ միայն ինձ աջակցի ներկայ գործակալ այնտեղ: Բայց այս անգամ դեռ նամակս չը վերջացրած, հարկաւոր եմ համարում դիմել Բագուի հասարակութեան մի համեստ առաջարկութիւնով:

Երբէք չենք սխալվել եթէ ասենք, թէ կովկասի ոչ մի քաղաքի հայ հասարակութիւնը այնքան առատաձեռն չէ դէպի ամենայն մի բարեգործական նպատակ, որքան Բագուի հասարակութիւնը, որը մինչև անգամ մի քանի անգամ արժանացել է «Մշակի», այդ առհասարակ գովարանելու համար ժլատ լրագրի գովասանութեան: Թիֆլիս, որ տասնամյակով թէ նիւթական է և թէ մտաւորապէս հարուստ է Բագուից, կարող է օրինակ վերառնել վերջինից որ դեռ տասն և եօթ տարի օրանից առաջ հանկարծել է թէ հարկաւոր է ունենալ մի «Վարդապետական ընկերութիւն», իսկ ինքը, Թիֆլիսը, դեռ նոր է մտածում հիմնել «Բարեգործական ընկերութիւն» այն էլ հազար ու մի խաջուրաններով: Ուրեմն եթէ Բագուի հասարակութիւնը այդքան առատաձեռն է և թէ նրա տասն և եօթ տարի առաջ լինացածը դեռ նոր է մտնում Թիֆլիսի հասարակութեան դուրը, արդեօք նրա համար հեշտ չէր լինի հիմնել մի ընկերութիւն ևս, որը նպատակը լինէր չքաւոր հայ ուսանողներին անմիջապէս օգնելը: Թէ որքան օգտաւէտ կը լինէր մի այդպիսի ընկերութիւն, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի կը լինի, երբ մենք աչքի առաջ առնենք աղքատ ուսանողների սարսափելի վիճակը: Որքան ընդունակ աշակերտներ են մեր նում առանց բարձր կրթութեան: Նիւթական միջոցից զուրկ լինելու պատճառով, քանիսը նրանցից կորցնում են իրանց առողջութիւնը

այրեւոյ խնամ ընակարաններում, կիրակրով լով անհունը կիրակրներով, և վերջ ի վերջոյ երկուստապէ հասակում զրկվում են կեանքից: Ես խօսում եմ դեռ կովկասում ուսում առնողների վրա, բայց կրկնապատկում են այդ խնդրների նեղութիւնները, երբ որ սրանք Ռուսաստան են գնում: Ես կարծում եմ, որ հեշտ կարող է Բագուի հայ հասարակութիւնը հիմնել մի այդպիսի ընկերութիւն, որը կը բաղմապատէ նրա փառքը և պատիւը:

Շիրվանզողէ

ՆԱՄԱԿ ՄԵՆՂԱՐԱՔԻՒՄԻՍ

30 հոկտեմբեր 8-ին

Վարդանի գիւղի եկեղեցու աւետարանը և այլ մի քանի եկեղեցական գործեր, ուսումնական վառած մոմի բոցից այրվել են: Տեղական քահանայն այս և այն կողմ ընկած նուէր է հաւաքում նորէն հարկաւոր եղած գործերը գնելու համար:

Երեւնում մի օրիորդի աշխատութեամբ հրատարակվող միզ անցյալ գրքի համար, մեր գիւղում օրիորդին ծանօթ կրկու պարունակ նրա խնդրանաց զիջանելով բաժանորդներ հաւաքեցին: Ահա արդէն երկու տարի է, որ ես և ինձ հետ մի քանիսները անհամբերութեամբ սպասում ենք այդ երազական գրքի հրատարակման: Ինչու արդեօք այդ պարունակը գտնէ լրագրողների միջոցով միզ չեն միամտացնում:

Այնքան արագօրէի առաջնորդ գեր. Յուսիկ վարդապետը եկաւ Վարդապետայով անցյալ Վարդապետին, որ ունի երկուսու գալուցներ և որ գտնվում է նրա իրաւասութեան տակ, բոլորովին հետաքրքրելի չեղաւ նրան: Ինչպէս պատմեցին, հայր սուրբը այնքան լուրջ է եղել, որ աղայոց գալուցի լուսաւորանքի տակով անցնելու ժամանակ, աշակերտների երգեցողութիւնն անգամ նրա ուշքը չէ գրաւել:

Մեր անտառապետի անդրժ վարկերու համար, ոչ միայն Վարդապետի հասարակութիւնը, այլ և Շիրվանց բոլոր ժողովուրդը, որ առաջ այստեղի անտառով էր կառավարվում, այժմ գնում են լուսն անտառապետից հրաման անունով աւելի արժան տակաւոր է այնտեղից բերում շնտութեանց հարկաւոր փայտերը: Չը գիտենք ինչն է աւելի, որ այս վերջին թաւաններում մեր անտառը այդպիսի հարտանաբողներին է վիճակվում հսկելու:

Մի քանի օր առաջ ես անձամբ այցելեցի մեր գիւղին մօտ Երզրուրի գիւղի դպրոցը: Գալուցը բաղկացած է մի մտնել և իսնառ սենեակից, որի մէջ չարած են սեղանների փոխաբէն մի քանի ստամակներ և նոցա վրա սիւսած հասիներ: Վաթառն բուրլիանոց ուսուցչի հետ բազմ չունեցայ ծանօթանալ: Միայն թէ ընկերներս հեռուցից ցոյց տուին մի մարդուն, որ պարսկական քոչերը ունենին և մի պատահաւած բրդեայ վերնազգեստ հագած մի քանի փափախաւորներին հետ գնում էր դաշար գրօսելու: Մտազայ անել, որ իմ այցելութիւնը անժամանակ էր, որովհետև աշակերտները ձաշել էին գնացած: Գալուցը կիրակի օրերն էլ ծառայում է շիրական դատարանին: Բայց ինչ եմ ասում, միթէ ամբ թան է, քանի որ իրենց աւազ եղբայրներ, դարաբերիչները ևս զվարճը ծառայեցնում են շիրական դատարանին:

Կաղուրդի գիւղի տանուտէր պ. Գ. Շողիբանցը բաւական արթուն է իր պաշտօնավարութեան մէջ: Պարտք էր ընտրված օրից մի քանի գործեր է կատարել:

ՆԱՄԱԿ ՕՂԵՍԱՅԻՑ

Մայիսի 1-ին

Սրբա հետ միայն ուղարկում եմ ձեր խնդրագրութեանը 200 րոպե, որ հաւաքեցի յօգուտ Հայաստանի սովորականների մեծ մասամբ Օղեսայի օտարական հայ վաճառականներից և խնդրում եմ հասցնել այդ գումարը ուր հարկն է. Պ. Ազամիրզեանց 20 ր., Տ. Տէր-Ստեփանեանց 15 ր., Կ. Թիթարով 15 ր., Գ. Հնանանց 10 ր., Ա. Եղիազարեանց 5 ր., Մ. Թաւառեանց 5 ր., Վ. Խուզազարեանց 5 ր., Ն. Կովկասեանց 5 ր., Յ. Միրզայեանց 5 ր., Վ. Թաւառեանց 5 ր., Ս. Մարգարեանց 5 ր., Հ. Սաֆարեանց 5 ր., Ս. Չոփարով 5 ր., Զ. Շիրանց 5 ր., Պ. Կուզանով 5 ր., Ս. Ճոնով 5 ր., Գ. Փիլիբով 5 ր., Ս. Երվանդով 5 ր., Ա. Մնացականով 5 ր., Յ. Կիօպեկ 5 ր., Յ. Ալէնիկեանց 5 ր., Մ. Մովսէսեանց 3 ր., Ա. Ասատուրեան 3 ր., Յ. Ազամեանց 3 ր., Մ. Վարդեանց 3 ր., Բ. Աշխատեանց 3 ր., Գ. Վարդարով 3 ր., Կ. Փիշչալով 3 ր., Մ. Շալամով 3 ր., Մ. Սյուչկին (ուսու) 3 ր., Մեդերթ և Կոգան (հրէայ) 3 ր., (ուսու) 3 ր., Ա. Մեքրով (հրայցի) 2 ր., Մ. Կուրբնով 2 ր., Ն. Ն. Չ. Մ. Վալարով 1 ր., Ս. Օղինեանց 1 ր., Յ. Մարտիրոսեան 1 ր., Բ. Բոստամեանց 1 ր., Ս. Թուրքեանց 1 ր., Բ. Յարութեանց 1 ր., Մ. Արֆալով (օղեսայի) 1 ր., Խ. Եղիկիսեանց 1 ր., Տ. Չարաբեանց 1 ր., Յ. Սիւրբալով (հրայցի) 1 ր., Մ. Փելման (հրէայ) 1 ր., Մ. Ստերլին (հրէայ) 1 ր., Մ. Փիշման (հրէայ) 1 ր., Ա. Սիւրբամեանց 1 ր., Ա. Բաբայեանց 1 ր., Ուն 1 ր.:

Պօղոս Ազամիրզեանց

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

30 հոկտեմբեր 3-ին

Վէրջիւն գիւղը, որ Միւսախից 30 վարտաշափ հետ է և ուր բաւականին հայեր ու վրացիք կան, մինչև այժմ չունի որ ուսումնարան: Հայերը թէև սկսեցին շինել այն, բայց նորից երկու կապալաւորների, շինութիւնը մնացել է քայտօր անկատար, թէև պ. պ. կապալաւորները կանխիկ են արդէն ստացել իրանց ստանալի փողը: Մենք սրանից առաջ յիշեցինք, որ վերջիններից հանդուրեցաւ Ստ. Տէր-Ստեփանեանց անցեալ տարի կտակել է նոյն ուսումնարանի կառուցման աւարտելու համար 300 ր., որ յանձնվել է Միւսախի գործակալ Ստեփանեանց ա. ք. Տէր-Ստեփանեանցին, բայց չը նայելով այս հանգամանքին, վերջիններից ժողովուրդը այնքան անտարբեր է և սառն դէպի իրան օգուտը, որ ամենին ուշադրութիւն չէ դարձնում այս գործին և մինչև ցայժմ էլ չի նուրթելու մնացել է անկատար, այն ինչ իրանց մանուկներին յանձնել են նրանք նոյն տեղի վրա: Բայց քահանային և այն պատճառով զուրկ են թողել նրանց իրանց մայրանոց դպրութիւնից... Ուղիղն ասել, շատ ցաւակ է տեսնել ժողովրդի այսքան բազմութիւնը բաւարովին զրկված իրանց մայրնիւ լեզուից և նրան ուսանելու միջոցներից: Միթէ միայն Թիֆլիսի վրա պէտք է լարած ունենալ ուշադրութիւն և բոլորովին մտազոթեանը տալ նրանց հետո ընակվում միայն այն պատճառով որ Թիֆլիսի երկուստարգուցիւնը թէ գրաւոր և թէ բանասիր կերպով պահանջում է, որ իրանց մանուկների վրա ուշադրութիւն դարձնվէր, իսկ այս վերջինս և սրա պէս շատ ուրիշները լուս են մնացել և անտարբեր իրանց օգուտների մասին, իրանց խրին սոցիալական պատճառաւ... Մեր կարծիքով սրանց լուսութեան բարձրագոյն ազդակներինց սառել պէտք է ընդունել, որովհետև սա ընդունակ է մահաւիթ սեղերից աւելի վառն-

գաւոր և անբուժելի վերքեր և սպիներ գոյաց- նելու... Մենք ուշադրութիւն ենք պահանջում այս ցաւալի իրողութեան մասին այն պարոններ- ին որոնք յանձն են առել զեկաւար և առաջ- նորդ լինելու այսպիսի անտէր և անօգնական ժողովրդի...

Իմանում ենք, որ նոյն տեղի վրայի իշխան- ները մի խնդր են պատրաստել տեղութեանը ներկայացնելու, որի մէջ յիշել են թէ իբր ի- րանք հայոց եկեղեցու գաւթուր արդէն կա- ռուցել են ուսումնարան (որ ոչ թէ վրայ այլ հայոց կառուցված է, ուրեմն և սեպհակաճու- թիւն այս վերջիններս, վրայիք սեպհական ու- սումնարան չունեն կառուցված), և խնդրում են այժմ մի ուսուցիչ և նրա վրա իրանք ստորագ- րելով, ստորագրել են տուել և նոյն տեղի հա- յերին, որ ամենին չեն գիտացել այն խնդրիքի բովանդակութիւնը... Ահա այսպէս են ընթա- նում մեր ազգային գործերը, պի խմբագրել, թէն ամեն մի անկիւնում պաշտօններով և իրա- ռուցներով մարդիկ ունենք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ստացանք մի փոքրիկ ութ երեսից բաղկա- ցած բրոշիւր հայերէն լեզուով, որ տպված է թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանցի տպարանում: Բրոշիւրի վերնագիրն է. «Սուրբ Էջմիածնի դան- զակը» և ստորագրված է Թորոս ձիւնակիրեանց:

ԱՆԷՔՍԱՆԿՐԱՊՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Հաս- տատ աղբիւրներից իմացանք, որ ակքանդա- պոլիսի երևք պատգամաւորներից որոնք եկած էին Էջմիածնի կաթողիկոսին ներկայանալու հա- մար, նրանցից մի հոգի միայն իրաւունք ստա- ցաւ ներկայանալ վեհախորհրդին, իսկ երկրորդ միա- սին ներկայանալ Մանկունի յարմար չը հա- մարեց: Կաթողիկոսին ներկայացողը, ասում են բժիշկ է եղել»:

Ըստ մեր օր թիֆլիսի մեր հայ նշանաւոր բժիշկներից մին կանչված է Էջմիածին, կաթողի- կոսի անյուսալի հիւանդութեան պատճառով:

Յիշեցնում ենք թիֆլիսի հայոց հասարակու- թեան որ այսօր, ուրբաթ օր, պ. Ա. Թորոսե- իան կրկնելու է իր գասախօսութիւնը Արժրու- նու թատրոնում:

ՍԱՐԱՏՈՎԻՅ մեզ գրում են. «Այս տարի Սա- րատովի և Սամարայի նախնայնորում շատ անառ հունձ է սպաւում: Այստեղ շատ յաճախ կրկն- վում են անձնասպանութիւններ: Տեղական պո- լիցիան խիստ հսկողութիւն է անում կարգ պահ- պանելու վրա, որպէս զի ուրիշ տեղ եղած հա- կահրեական շարժումներ այստեղ չը պատահեն: Տեղիս դուռնայում հարց է յարուցված կոմս Կո- րիւս-Մէլիքովին ցաւակցութիւն յայտնել նրա հրաժարականի մասին և առաջարկել նրան Սա- րատովի պատուաւոր քաղաքացու կոչումը»:

Ղաւբայից, պ. Յովնանէս Տէր-Յակովբեանց խնդրում է մեզ յայտնել որ «Մշակի» 82 համարի մէջ տպված Ղաւբայի նուիրատուների ցուցակի մէջ մասն հետեւել սխալները. Խաճակ կուզ- նեցօվի և Յովնանէս Տէր-Յակովբեանցի անունը ներք տպված էին, բայց յիշված չէր թէ որքան գումար են նուիրել այդ պարոնները: Այժմ յայտնում ենք որ առաջին պարոնը նուիրեց 1 ռուբլ, իսկ երկրորդը 3 ռուբլ:

Հարաւային Ռուսաստանի առաջ լրագրիւրները հա- ղորդում են որ Ողէտայում, կիւիւում և ուրիշ քա- ղաքներում հակահրեական անկարգութիւններից յետոյ կարանաւորմանից շատերին պոլիցիան լուրջօվ էր ծնում: Ըստ արձակուրդի Ասում են որ մինչև անգամ մի քանի կանայք ենթարկվեցան այդ պատժին:

Այժմ լսում ենք որ թիֆլիսի օրիորդական ինտիլլիգենտ և Ս. Նինայի իրական դպրոցում վասնված փողը ոչ թէ 120,000 է, այլ հասնում է 150,000 ռուբլ գումարին: Ըստ մեր նոյնպէս, որ իշխան Սիգաճուն Էրիստովի վրա, որ գանձա- պան էր այդ երկու դպրոցներում, արդէն գո- սաստանական քննութիւն է նշանակված:

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Սերբիայի իշխան Միլան, ինչպէս հա- ղորդում են լրագրիւրները, այժմ ձանձաղա- րորդում է Եւրօպայի մէջ, որպէս զի հա- մոզի մի քանի պետութիւններին չընդգի- մանալ սերբիական իշխանութիւնը թագա- ւորութիւն դարձնելու գործին: Իշխան Մի- լան այցելեց Աւստրիայի, Գերմանիայի և Ռուսաստանի մայրաքաղաքները և ամեն տեղ նրան մեծ պատու ընդունեցին: Այժմ իշխանը Ս. Պետերբուրգի մէջ է:

Իշխան Միլանի ընդունելութեան մասին Բելլիւնի մէջ ստացված են հետեւեալ տե- ղեկութիւնները: Իշխան Միլանին երկա- թուղու կայարանի մօտ Բելլիւնի մէջ ըն- զունեցին նահանգապետը և կայսրի աղիւ- տանտները, որոնք առաջնորդեցին նրան պա- լաւար: Ժամի 2-ին իշխանին այցելեց կայսր Վիլհելմ և այդ այցելութիւնը բաւական երկար ժամանակ տեւեց: Միւս օրը պալա- տի մէջ ի պատիւ իշխան Միլանի մի ճաշ- կերպի կազմվեցաւ, որին ներկայ էին թա- զաժառանգը, կայսրական տան անդամները, բազմաթիւ զինեցիկներ և միւստերներ:

Բէլլուրգից հարցուրում են, որ իշխան Միլան կը վերադառնայ իր մայրաքաղաքը մինչև օգոստոսի 2, կը լինում է սերբիա- կան ժողովրդական տօնը: Արագիւրները հա- ղորդում են, որ նա նորից կը ձանձաղա- րորդէ Եւրօպայի մէջ իր ամուսնի հետ, բայց առաջ իրան Սերբիայի թագաւոր կը յայտնի, եթէ կը ստանայ Աւստրիայի, Գերմանիայի և Ռուսաստանի համաձայնու- թիւնը:

Ռուսաց լրագրիւրները յայտնում են հե- տեւեալ մտքերը Սերբիայի մասին: Իշխան Միլան սուիթ չունի կասկածի Ռուսաստա- նի համակրութիւնը և նրա դիպլոմատիա- կան օգնութիւնը Սերբիան թագաւորու- թիւն յայտնելու գործի մէջ: Աւստրո-Ռու- գարիայի և Գերմանիայի համաձայնութեան նից յետոյ բոլոր դժուարութիւնները Սեր- բիան թագաւորութիւն յայտնելու համար հեռացրած են: Սերբիայի կառավարութեան և ժողովրդի ցանկութիւնը՝ պատկի իրանց ազգային անկախութիւնը թագաւորական բարձր տիտղոսով, շատ հասկանալի է, մա- նանայ որ այդ տիտղոսը համապատաս- իանում է սերբիական ժողովրդի դրու- թեանը և նրա պատմական ցանկալի դա- ղադարներին: Սերբիական վազնի հօր թագաւորութիւնը, որ դարեւոր արիւնահիգ պատերազմի օգնութեամբ նորից ձեռք է բերել իր կատարեալ անկախութիւնը չէ կարող Բուլղարիայից ստոր մնայ, չէ կարող իշխանութիւն լինել, քանի որ Բուլղարիան թագաւորութիւն է յայտնված: Իշխան Մի- լանի կատարելագույն օրինաւոր ցանկութիւնը անկապած բաւականութիւն կը ստանայ և Սերբիան կը բռնի իր տեղը Եւրօպայի պա- վեանական անկախ պետութիւնների շար- ջումը:

Այդ գործը աւելի դրական նշանակու- թիւն ունի Աւստրո-Ռուգարիայի համար, որ տիրում է հին սերբիական մի քանի եր- կիրների վրա, որոնց ազգաբնակչութիւնը չէ ծածկում իր համակրութիւնը դէպի իր նախկին հայրենիքը: Բայց Աւստրիայի ազ- գեցութիւնը Սերբիայի մէջ այժմ դերակշ- ուղ է և նա մի քանի զիջումներով կա- մեղում է այդ ազդեցութիւնը աւելի էլ սաստկացնել: Սերբիան թագաւորութիւն դառնալուց յետոյ նրա յորաբերութիւնները

Աւստրիայի հետ աւելի էլ բարեկամական կը լինեն:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական սենատը մերժեց պատգա- մաւորների ժողովից հաստատված Բարբուի ընտրողական օրինակիցը: Գամբետայի բազմաթիւ կուսակիցները չէին սպասում այդպիսի կատարեալ անաջողութեանը և կարծում էին, որ սենատը դուրս կը փոփո- խէ օրինագծի առանձին յօդուածները, բայց ամբողջապէս չի մերժի: Հանրապետական լրագրիւրների յօդուածները չեն համապա- տասխանում այն սպասելիքներին, որ նը- րանք անում էին սենատին, եթէ նա ընդ- դիմադրէր պատգամաւորների ժողովի վրձ- ուին «République Française» լրագրը խոստովանում է, որ Գամբետա և նրա կուսակիցութիւնը կատարելագույն յաջոված են: Այդ լրագրը կարծիք է յայտնում, որ այդ գործի անաջողութիւնը կարող է ապագայում նշանաւոր դժուարութիւններ պատճառել և որ ընտրողական նոր ձեւի պաշտպան հանրապետական կուսակցութիւնը կը հասնի իր նպատակին, եթէ հարկաւոր լինի մինչև անգամ սենատին վեատել: Պատգամաւորների ապագայ ընտրութիւն- ները կը վճեն ոչ թէ միայն Բարբուի օ- ըննագծի, այլ և սենատի վիճակը, որովհե- տեւ, եթէ պատգամաւորների նոր ժողով թշնամարք վերաբերվի սենատի վերջին բուէարկութեանը, ուրեմն սենատը յաղթ- ված կը լինի և կերեայ, որ ժողովաւորը պակարակում է նրա բռնած ընթացքը: Իսկապէս դժուար չէ նկատել, որ «Républi- que Française» լրագրի զատողութիւնները հակասում են վիճելի հարցի գործնական դրութեանը: Սենատը նոյն իսկ այն պատ- ձառով մերժեց պատգամաւորների ժողովի վճիռը, որպէս զի միջոց տայ ընտրողներին յայտնել իրանց կարծիքը ընտրողական ձեւի մասին: Գոնեա այդ պատճառաբանութիւնը զլլաւոր տեղ էր բռնում սենատի մասնա- ժովի գեկուցման մէջ: Ժողովուրդը կարող է հաւանութիւն տալ ընտրողական այս կամ այն ձեւին, պատգամաւոր ընտրելով այս կամ այն ձեւի ընտրութիւնների կու- սակիցին: Բայց ինչպիսի ընտրութիւններ էլ պատահին, Ֆրանսիական սենատը այնու- ամենայնիւ կը մնայ:

Այդ հարցին աւելի մեծ նշանակութիւն են տալիս այն հանրապետականները, որոնք միշտ թշնամի են եղած սենատի հիմնուուն և որոնք այժմ կամեղում են օգուտ քաղել Գամբետայի կուսակցութեան տրամադրու- թեանց սենատի գոյութեան մասին հին վէճը բարձրացնելու համար: Արմատական կուսակցութեան «Rappel» լրագրը ար- դէն մի յօդուած է տպել «սենատի կո- րուտար» վերնագրով, որի բովանդակու- թեան մասին կարելի է գտակ վերնա- գրից: Բայց Ֆրանսիական ժողովուրդը հա- ղի թէ յանձն կանոնի կասկածանքի են- թարկել ներկայումս գոյութիւն ունեցող որ և է հիմնարկութիւն և այնպիսի հար- ցեր բարձրացնել, որոնք կարող են կասկա- ճելի գարձել 1875 թուականի սահմանա- դրութեան գործադրութիւնը: «Rappel» լրագրի ցանկացած փորձերը կարող են շա- հաւետ լինել հանրապետութեան թշնամի բռնապարտեանների և կղերականների հա- մար, որոնք մերժում են այն օրէնքների հեղինակութիւնը, որոնցով որոշվում է Ֆրանսիայի պետական այժմեան կազմակեր- պութիւնը:

ԱՆՅՈՒՍ

Կանանց կալուածական միութեան ան- դամ և հրապարակախօս օրիորդ Աննա Պար- նել աւելի արմատական մտքեր է յայտնում գանազան ժողովների մէջ, քան թէ նրա կղբայրը և մի և նոյն ժամանակ, իբրև կին, օգուտ է քաղում պոլիցիայի ներդրամու- թեանց: Նորիւրումս օրիորդ Պարնել մի ճառ արտասանեց Տուլի մէջ: Նրան շքանշանու- էր կանանց հասարակութիւնը, իսկ տղա- մարդիկ դուրսը այնքան էին հաւաքվել, որ անցնելու տեղ չը կար: Ձիււոր ժամդարձ- ները ի դուր տեղ աշխատում էին հեռաց- նել տղամարդկերանցը: Նրանց մտարկի հարուածներով դուրս արին: Այնուհետև օրիորդ Պարնել իրան լսող կանանց հետ մտաւ եկեղեցու բակը, որտեղ շարունակ- վեցաւ նրանց ժողովը: Հրապարակախօս օ- ռիորդը զլլաւորապէս յարձակում էր պո- լիցիայի վրա, զգուշացնելով իրան լսող կա- նանց պոլիցիայի շողաթողից խարդախու- թեանց: Բացի այդ օրիորդը աւելացրեց, որ Ֆորստեր գաղտնի հրահանգներով պատուի- րել է պոլիցիային ձեռք բերել ազգասեր- ների հաւատարմութիւնը:

Այս ընդհանուր ատելութիւնը դէպի պոլիցիան մի նոր շրջան է կազմում իրան- դական անկարգութիւնների պատմութեան մէջ: Գեռ նորիւրումս կալուածական միու- թիւնը հրամայում էր իր գործակալներին գանազանի զատատանական վճիռները կա- տարողներին հասարակ պոլիցիականներից: Առաջինները շարագործներ էին համարված, երկրորդները նրանց սկամայ գործիքներ: Իսկ այժմ բոլորն էլ միտասակ առելի են դարձել իրանացիների համար, այնպէս որ պոլիցիական գործակատարի հետ խօսելը վտանգաւոր է դարձել: Ձիււորները գեռ ևս պահանջ են իրանց հեղինակութիւնը ամբողջ մէջ, մինչեւ պոլիցիականները կատարելագույն քարիժվում են ժողովր- ղից: Գանի որ զինուորներն էլ սխել են մասնակցել Ֆերմերներին արտաքելու գոր- ծին, նրանք էլ կորցնում են իրանց հեղի- նակութիւնը:

Որովհետև լուր տարածվեցաւ, թէ Տու- լի մէջ կայանաւորված է մի յարգված Ֆեր- մեր, այնտեղ մի քանի հազար մարդ հա- լաքվեցաւ: Արթուր կարանց հեռադրական թերիւրը, փչացրեց ձանապարհները և կա- մուրջները: Այդ կոմսութեան մէջ շատ գործեր ուղարկվեցան Մի քանի այլ կոմ- սութիւններին մէջ պատերազմական դրու- թիւն է յայտնված:

Իրլանդիայի նահանգներից մէկի մէջ նո- րիւրումս մի ազգաբարութիւն տարածվեցաւ, որից երեւում է Իրլանդիայի այժմեան տրա- մաղրութիւնը: Այդ ազգաբարութիւնը սպասնում է մահով մի կենեղեղին և նրա մէջ ի միջի այլոց ստված է. «Այդպիսի անպիտաններին պէտք է կոտորել, եթէ մինչև անգամ նրանց պաշտպանէին թա- զուհու բոլոր գործերը: Մենք այլ ևս չենք համբերի կալուածատէրերի բռնաւորու- թիւնը, որոնց վերջին ժամը արդէն հասել է: Կորչեն կալուածատէրերը: Զողը պատ- կանում է իրլանդական ժողովրդին, որ նրան իր քրտինքով նրա համար չէ ջրում, որ այդ հողի պտուղներով ձրիակները ապրեն: Կորչեն բռնաւորները»:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական կիսապաշտօնական լրագրիւ- րները հերքում են այն լուրը, իբր թէ իշ-

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Չը նոյնիով մարտի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին.
ԿՕՆԳՕ-ԹԷՅ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիւսնայի **ԿԱՅՍԱՌԻ** 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** **ԹԷՅ** 2 ռ. առանց թղթի: Անգլիական թէփոյվերներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջնասնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրիսի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկտրակա կախաշօխարհի ծախելու համար, որոնք փարիզի հանգիսի ժամանակ ոսկէ մեղալ ստացան:
ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65 կ. և ամենալաւը 2 ռ. 30 կ.: Ս ամառականներն օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հագուստ 15 ռ., կոնֆեկտներ հազի գէմ 60 կ. Փոխար:

90—100

ՐՕՍՏՈՎ ԳՕՆԻՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՏԵՐ ԵՍ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՅՈՎ յայտնում է հետեւեալը. Իմ ծխախոտի արդիւնաբերութեան մեծ պահանջը զրոյցի Թիֆլիսի գործարանատէր Գիրայով և ընկ. և Գայեզովին նմանիկ իմ արդիւնաբերութեան ձեւին գանազան անուններով, մանաւանդ «10-ՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ», «ԳԵՆԵՐԱՎ ԳԷՅՄԱՆ» և «ԳԵՆԵՐԱՎ ՍԿՐՈՒԵՎ»: Նախագործը յայտնում իմ ծխախոտը գործածողներին, ինչպէս իմ ուղարկութիւնը դարձնել իմ ֆիրմայի հետեւեալ նշաններին վրայ: 1) Հրապարակական հաւանութիւն 1865 թուականի Մոսկովայի հանդէսից, 2) Ոսկիայ մեղալ Մոսկովայի անկենդան հանդէսից 1872 թ., 3) Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիեննայի աշխարհահանդէսից, 4) մեծ մեղալ 1876 թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհահանդէսից, 5) Արծաթէ մեծ մեղալ 1878 թ. փարիզի աշխարհահանդէսից, իսկ այդ նշանները չունեցող արդիւնաբերութիւնը խնդրեմ կեղծ չափարկել: ՄԱԿԵԳՕՆԻԱՅԻՑ ՆՈՐԵՐՈՒՄ ՍՈՒՆՆԱՅԻ ԿՈՒՇՆԱՐԵՅՈՎ:

4—12

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԳՈՐԾԱՐԱՏԵՐ ԿԱՒ ՐԱՅՖԻԻ «ԴԱԻԻԹ-ԲԷԿ» անունով պատահական վէպի I և II հատորները միասին կազմված: Գիրքը բաղկանում է 440-երեսներից, տպված է մաքուր թղթի վրայ: Գինն է 1 ռուբլ 50 կոպէկ:
 Ծախվում է «Մշակի» խմբագրատանը, Թիֆլիսի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՒՄՆՈՒՄ, Չ. Գրիգորեանցի ԿՈՎԿԱՍՏԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՒՄՆՈՒՄ, պ. պ. Շահումեանցի, Հովուեանցի և Տէր-Յովսէփեանցի մագաղիններում:
 Օտարաբաղաջացիք կարող են գիմել «Մշակի» խմբագրատանը Ց. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈՒՅԱՆԻ հասցէով: 2—5

Un professeur de français, connaissant parfaitement le français, le latin, le grec (dix ans de professorat), prendrait répétitions ou bien pourrait prendre préceptorat ou leçons pour conversation française et perfection de la langue. Pourrait se charger de faire faire les cours de gymnase à des enfants qui parleraient déjà le français. S'adresser à la rédaction du journal arménien le «Mechak».

4—5

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՏՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՖԻԻ
 Տպված մաքուր թղթի վրայ, գիրքը բաղկանում 400 էրեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրափառատանցում», «Կովկասեան գրափառատանցում» պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահումեանցի, Բոզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագաղիններում:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ.:

Въ Редакціи газеты «МШАКЪ»
 Продается
 „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
 Д. Григорія АРЦРУНИ.
 Брошюра напечатана въ Москвѣ.
 Цѣна 25 коп.

144 Արժեքաւոր գաղթէա 144 ամենաթեմա պահեստ մերէլի և հայկիների:

Հրատարակութեամբ Ներքինի Սիմէոնեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Նրէբերի «Տնային բժշկական մարմնամարզութեան» գրքիկը հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բարձրաստիակ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրափառատանցում», Նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մօտ: Թրոյկիւի քեր. տիպոգրաֆիա Վարդանյան, ՎՊ Թիֆլիս.

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթուներ և բազմաթուներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջև փողոցում կատարիկաց փողոցի անկիւնում Մի. ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:
 Օտարաբաղաջացիք կարող են գիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.
 18—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՅՖԻԻ «ԽԵՆԹԸ»** անունով վերապատմութիւնը: Նոր վեկը ցանկացողներին խնդրում ենք գիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմետ-Յախթեանցի տպարանը: ԲԱՅՈՒՄ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՉՊ. պ. Գրիգոր Բէջանեանցին.
 Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арумянца АБЪЮУ АП-РЪСЯНЦУ.

Վերականգնիցող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց բնական գոգնը վերադարձնող, Գինը 2 ռ. շերտ, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ.:



Մի և նոյն տեղը **ԽԵՆԱՅԻ ԻԻՂ**, մազերը ամրացնող համար, 1 ռ. ամանը վրձին պլակալի գէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: 79—100

Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ	Վաճառված թղթի ֆունտը	Վաճառված թղթի հետ ֆ.
1 ռ. 5 կ.	1 ռ. 30 կ.	1 ռ. 30 կ.
1 ռ. 10 կ.	1 ռ. 40 կ.	1 ռ. 40 կ.
1 ռ. 20 կ.	1 ռ. 60 կ.	1 ռ. 60 կ.
1 ռ. 40 կ.	1 ռ. 80 կ.	1 ռ. 80 կ.
1 ռ. 60 կ.	2 ռ. —	2 ռ. —
1 ռ. 80 կ.	2 ռ. 50 կ.	2 ռ. 50 կ.
2 ռ. —	3 ռ. —	3 ռ. —

91—100

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները
 Մայիսի 22 և 23-ին կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
 " 25-ից—30-ը Հաւլաբարի Մարիամեան օր. ուսումն.
 " 28 և 29-ին Կուկիու Թանդոյեան օր. ուսումն.
 " 30-ին Հաւլաբարի Ս. Մինաս եկ. ուսումն.
 Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
 " 3 և 4-ին Զորաշէն եկ. ուսումնարաններում.
 " 5-ին Շամբուեցոյ եկ. ուսումնարանում.
 " 6-ին Զորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
 " 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
 " 9-ին Զուգուրէթի Ս. Աստուած եկ. ուսումնարաններում.
 Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մաքուրներ, կոնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄՆԵՂԷՆ, բոխաներ, թասեր, երես լուանալու ամաններ, ջայիկներ, ԲԱՍԿԱՆԵՐ, կերակրի ամաններ (սյճի), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, զգայներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակներ, ՀՐԱՅԱՆԵՐ, ԲԷՎՕԼԱԵՐՆԵՐ, այրովներ, ՄԱՀԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիօ, պարուսին, թաշկիւտներ, երեսըրէներ, կլեմեկա, զուլթաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՅՆ, խերես, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌՈՒԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒՎԸ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՆՏԵՐՈՒՄԻՑԻՆ** ՄԷՉԻ:
 Մի և նոյն տեղը էժան գտնել. ՇԵՐԲԵՏ մազնեղի, խմոր ԾԱՐԱՒԻ գէմ, ԽԵՆԱՅԻ գինի ջերմի գէմ, կարթուսն ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկիցեալի համար, պարսկական փօշի:
 14—100

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԱՌԱՆՎՈՒԹԻՒՆՆԵՐ—ՀԵՔԻԱՌԵՐ. ԺՈՂ. ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ. ԱՌԱՏՆԵՐ. ԱՆԷԹՔՆԵՐ. ԵՐԳՈՒՄՆԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, և այլն, ուղարկող պարտններին խնդրում եմ այսուհետեւ ինձ հետեւեալ հասցէով գիմել.
 Вагаршанатъ. Тиграну Навасартянцъ.
 Տ. Նաւասարդեանց.
 5—6

ԱՄԱՐԱՆՈՑՆԵՐ
 Տփլիսից,— մօտ 8 վերստ հեռաւորութեամբ,— ՋԱՔԱՐԱՇԵՆՈՒՄ, փոքր Լիլլի մօտ, — փոքր Խուլիբայի կէս ճանապարհի վերայ տրվում են վարձով երկու ԱՄԱՐԱՆՈՑՆԵՐ, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղկացած իւրեանց առանձին խոհանոցներով: Գնի մասին կարելի է հարցնել տրոջը— Չաք. Գրիգորեանցին — նորա գրախանութումը: 9—10

Վ Ա Ր Շ Ս Վ Ա. իւր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մասնիկի քրտնից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,
ԳԱԼՄԱՆԻՆ
 անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների զեղատների և զրօզիանների մօտ: Գլխատուր դէպօ նիւթի հնարող ֆարմացիի մադիսարտո **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** զեղատան մէջն է գտնուում: Վարչակցում է Էլեկտրայի փողոց № 35. Գարմանիկի մեծ արկղիկը արժէ Վարչակցում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խորհախուձներից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեկնութիւնը և փարիզի աշխարհահանդէսի մեղալները: **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ**
 7—20 (1)

